ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-17/17» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 21-ին կնքված **N «ՀՀՄՆ-ՄԱԱԾՁԲ-17/17» ծածկագրով** պայմանագրում **2017 թվականի դեկտեմբերի 1-ին** կատարված **փոփոխությունների վերաբերյալ** հանրային տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ **երկկողմ հաստատված փաստաթղթի** պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքների հրատարակչության կողմից **լրացուցիչ նյութերի հանդիսանան** և խմբագրման հետ պայմանավորված, Կատարողի կողմից առաջարկվել է **երկարաձգել պայմանագրով** նախատեսված հրատարակման աշխատանքների կատարման՝ գրքի հրատարակման և **հանձնման ժամկետը**:

Փոփոխության **նկարագրությունը**: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» **հավելվածով նախատեսված** աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի դեկտեմբերի 30-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տաթևիկ Սուքիասյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N N «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/17» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «01» 12 2017թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էջ մեդիա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Մ. Ծատուրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 21-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման **«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-17/17»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4-րդ և 7.5-րդ կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1. Պայմանագրի 4.1.1 կետում **«Պայմանագրի գնի 60 %-ը՝ 1 653 000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամը»** բառերը փոխարինել **«Պայմանագրի գնի 100 %-ը՝ 2 755 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամը»** բառերով:

1.1.2. Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքի կատարման ժամկետի ավարտը՝ **«01» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերը փոխարինել **«30» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Էջ մեդիա» ՍՊԸ
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան	Հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան
փող.3 Կառավարական տուն 2,	Հանրապետության 1/3,բն.11
հեռ.՝ 58-51-96, 58-51-78	հեռ.՝ 077 94 30 68
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862	ՀՎՀՀ 03543559, հ/հ N 1510041863920100
ՀՀ Ֆինանսների նախարարության	«Արարատբանկ» բանկ ԲԲԸ
աշխատակազմի գործառնական վարչությունում	
---------- / **Ս. Մուրադյան**	---------- **Մ. Ծատուրյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.